ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՀՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ՝ ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴ ՎԵՐԸՆՏՐՎԵԼՈՒ ԱՌԻԹՈՎ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՍՊԱՍԱՒՈՐՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՏԷՐԵԱՆ, ՈՐ Ի ՄՈՆՐԷԱԼ, ԿԱՆԱԴԱ

Հոգեկան խոր գոհունակութեամբ տեղեկացանք կանադահայոց Թեմական Վարչութիւնից, որ Դուք մայիս 27-ին, յընթացս Թեմական Պատգամաւորական Ժողովի, վերընտրուել էք Կանադայի հայոց թեմի առաջնորդ՝ ըստ արժանեաց վայելելով բարձր գնահատանքը Տիրախնամ Ձեր թեմի հաւատաւոր Մեր զաւակաց:

Սիրելի Սրբազան.

Ծանօթ ենք եկեղեցաշէն ու հայրենանուէր Ձեր գործունէութեանը, որի առանցքը եղել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Վազգեն Ա երջանկայիշատակ Հայրապետի

«Սիրեցէք Սուրբ Էջմիածինը. Էջմիածինն է հայութեան միաւորող հզօր շաղկապը՝ Սրբալոյս իր Միւռոնով» պատգամով ներշնչուած՝ Դուք, որպէս հարազատ զաւակ Մայրավանքիս, ազնիւ նախանձախնդրութեամբ Ձեր մեծարժէք ներդրումն էք բերել Մայր Աթոռիս հեղինակութեան բարձրացման սրբազան գործին:

Մեր բարձր գնահատանքը յայտնելով կանադահայոց մեծազնիւ խրախոյսին եւ սիրով ընդառաջ հաւատաւոր հայորդեաց, որ ի Կանադա, Հայրապետական այսու գրով յղում ենք Ձեզ Մեր օրհնութիւնը եւ վաւերացնում ընտրութիւնը Ձեր, որպէս առաջնորդ կանադահայոց:

Աղօթում ենք առ Բարին Աստուած, որպէսզի Տէրն Ամենակալ պարգեւի Ձեզ «Համայն ամս ուղիղ վարդապետութեամբ եւ անարատ վարուք» առաջնորդել մեր ժողովրդին իր բարի երազների լուսեղէն հանգրուանները:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենեսեանդ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան
ի 28 Մայիսի յամի Տեառն 2000
եւ ի թուին Հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ 41